


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2025թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն իր գործունեությունն իրականացրել է համաձայն Բանկի Խորհրդի կողմից հաստատված և պարբերաբար վերանայվող հեռանկարային զարգացման ծրագրի: Օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ աշխատակիցների թիվ, բանկային համակարգում աճող մրցակցության պայմաններում Բանկը կարողացավ գրանցել ցուցանիշների բարենպաստ դինամիկա, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում Բանկի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:

Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ և վերջին տարիների ընթացքում բարելավման միտում ունեն:

Բանկը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, շուկայական, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով բանկը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 423.3 մլրդ ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.9%-ով (3.8 մլրդ ՀՀ դրամով):




Ակտիվների կազմում Բանկի հաճախորդներին տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը 2025թ. դրությամբ կազմել է 55.3%-ը՝ 234.2 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ ցուցանիշն աճել է 7.4% կամ 16.0 մլրդ ՀՀ դրամով: Կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկերը (այդ թվում՝ Ֆինանսական վարձակալությունից ստացվելիք գումարներ) 31.12.2025թ. դրությամբ կազմել են մոտ 119.2 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 10.8% կամ 11.6 մլրդ դրամով: Հիփոթեքային վարկերը 2024թ. համեմատ աճել են մոտ 2.8 մլրդ ՀՀ դրամով (8.0%-ով), ինչի արդյունքում 2025թ. դեկտեմբերի դրությամբ կազմել են 38.4 մլրդ ՀՀ դրամ:


2025 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակում շարունակեց ակտիվ գործունեությունը արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների դինամիկ աճ: 2025թ. վերջի դրությամբ արժեթղթերում Բանկի ներդրումային պայուսակը կազմել է 60.9 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 73.4%-ը ՀՀ պետական պարտատոմսերն են, 25.6%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերը, իսկ 1.0%-ը՝ բաժնային արժեթղթերը:

Ներդրումային բանկային ծառայությունների մատուցման շրջանակներում 2025թ. Բանկի կողմից տեղաբաշխվել են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի 2 տրանշ:

2025թ. ընթացքում Բանկը շարունակել է ակտիվորեն համագործակցել նաև այլ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ՝ վերջիններիս մոտ տեղաբաշխելով ակտիվների շուրջ 17.4%-ը կամ 73.5 մլրդ ՀՀ դրամ:




2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 344.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.5%-ով կամ 5.1 մլրդ ՀՀ դրամով:



Պարտավորությունների մեջ 280.1 մլրդ ՀՀ դրամը կամ 81.3%-ը կազմում են Բանկի հաճախորդներից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցները: Տեսակարար կշռով երկրորդ տեղում են միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը՝ 29.5 մլրդ ՀՀ դրամ կամ 8.5%:

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, 2025 թվականին ևս առաջնային դեր է հատկացրել դրանց խորացմանը և ընդլայնմանը:

Բանկն ակտիվորեն համագործակցել է հետևյալ միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Incofin Investment Management, responsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:



Հաճախորդների դրամական փոխանցումների սպասարկման որակը բարձրացնելու և գործընթացը դյուրին դարձնելու նպատակով 2025թ. ընթացքում շարունակվել է համագործակցությունը MoneyGram, Ria Money Transfer, Intel Express, MoneyTun, UBPAY և GoldenMuney արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ: Համագործակցության խորացման արդյունքում Բանկը հաշվետու տարում հաճախորդներին առաջարկել է մատչելի սպասարկման սակագներ՝ շուկայում ապահովելով մրցակցային կայուն դիրք:

Բանկի համար զարգացման գերակա ուղղություններից մեկն է վճարային քարտերի թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Բանկը թողարկում է ArCa բանկային վճարային քարտեր (ArCa Classic, ArCa Gold, ArCa կենսաթոշակային, “ArCa Մոր և Մանկան”, ArCa Gift, ArCa Business), Visa քարտեր (Visa Classic, Visa Gold, Visa Infinite), Master քարտեր (MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business, MasterCard Word), ինչպես նաև Diners քարտեր (Diners Club Young Professional, Diners Club Super Premium):


31.12.2025թ. դրությամբ Բանկի ակտիվ գործող վճարային քարտերի թիվը (նաև վիրտուալ) կազմել է 186,862 հատ, որից 75,593-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 53,864-ը՝ MasterCard, 57,296-ը՝ Visa Card միջազգային վճարային քարտերին, 109-ը՝ Diners Club միջազգային վճարային քարտերին:

Բանկի հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 11,705.2 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 4.0%-ով:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.


Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 15.8%,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 2.78%:



2025թ-ին Բանկը հայտարարել և ամբողջությամբ վճարել է 4.0 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով (2024թ-ին՝ 2.5 մլրդ ՀՀ դրամ): Մեկ բաժնետոմսի բաժին ընկնող շահաբաժինները կազմում են 2,135.2 դրամ (2024թ-ին՝ 1,334.5 դրամ):

Զուտ շահույթի գեներացման և շահաբաժինների վճարման արդյունքում 2025թ. վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 78.7 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ ավելացել է 8.9 մլրդ ՀՀ դրամով կամ 12.7%-ով:



2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 9,37 մլրդ ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,873,345 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 42,028 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 5,000 ՀՀ դրամ, իսկ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 6,248.3 ՀՀ դրամ:

2025թ. ընթացքում Բանկը հետևողականորեն պահպանել է ՀՀ ԿԲ սահմանած հիմնական տնտեսական նորմատիվները՝ ապահովելով վճարունակության և իրացվելիության բարձր մակարդակ:

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի նախագահ



Գ.Հովհաննիսյան

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ՝



Ն.Բեգլարյան